Մրցույթ՝ ՀՀ «Կոտայքի մարզի Զովքի Գ. Շահինյանի անվան միջնակարգ դպրոց»
ՊՈԱԿ-ի հասարակագիտության (7դասաժամ), համաշխարհային պատմության(7դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձև 1),
- լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***հոկտեմբերի 25***-ից մինչև ***նոյեմբերի 7-ը*** ներառյալ, ամեն օր՝ ժամը ***10:00-ից 15:00***-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից: Մրցույթը տեղի կունենա ***նոյեմբերի 9-ին՝ ժամը 14:00-ին*** , ՀՀ Կոտայքի մարզի Զովքի Գ. Շահինյանի անվան միջնակարգ դպրոցում.

հասցեն՝ Կոտայքի մարզ, Զրվեժ համայնք, գ. Զովք, գլխ. խճղ. 13:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (098) 38-06-36 հեռախոսահամարով:

Դպրոցի տնօրեն՝ Է.Նիկողոսյան

Կ.Տ.